ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«10» դեկտեմբերի 2018 թ.

N 317-Ա

ԱՆԱՀԻՏ ԴԵՐԵՆԻԿԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ԿԱՐՃԱՂԲՅՈՒՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 111-հոդվածի 2-րդ մասով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով՝

Կարգադրում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Կարճաղբյուրի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Անահիտ Դերենիկի Սարգսյանի հետ 2015 թվականի դեկտեմբերի 10-ին կնքված N 174 աշխատանքային պայմանագրի ժամկետը լրանալու կապակցությամբ 2018 թվականի դեկտեմբերի 10-ից համարել լուծված:
2. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Անուշ Պողոսյանին:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ
ք.Գավառ